

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

15.05.2021թ. ԿՆՔՎԱԾ N «ԳՀԱՊՁԲ-15/15-2021-1-ԴԲԳԳԿ-1» ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան

«23» «06» 2021թ.

ՀՀ ԱՆ «Դատաբժշկական Գիտագործնական Կենտրոն» ՊՈԱԿ-ն, ի դեմս տնօրեն Մհեր Բիշարյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ-ն, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, ի դեմս տնօրեն Ն.Անդրեասյանի, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 15.05.2021թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-15/15-2021-1-ԴԲԳԳԿ-1 գնման պայմանագրի (Այսուհետև՝ Պայմանագիր) 8.15-րդ կետը, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 18-րդ կետը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում վերոհիշյալ որոշման 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին N «ԳՀԱՊՁԲ-15/15-2021-1-ԴԲԳԳԿ-1» գնման պայմանագրի շրջանակներում 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույց (վճարման ժամանակացույց)՝ համաձայն կից հավելվածի:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է N «ԳՀԱՊՁԲ-15/15-2021-1-ԴԲԳԳԿ-1» գնման պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Ապրանքը մատակարարվելու է համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ 20 օրացուցային օրվա ընթացքում:

2.3 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի գնման պայմանագրով նախատեսված մյուս կետերը, մնում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են 2 (երկու) էջից, կնքվում են հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### ԳՆՈՐԴ

ՀՀ ԱՆ <<Դատաբժշկական Գիտագործնական  
Կենտրոն>> ՊՈԱԿ  
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մ.Չերացի 5/1  
Գանձապետարան  
Հ/Հ 900018001975  
ՀՎՀՀ 00405431  
Տնօրեն՝ Ս. Ս. Բիշարյան

#### ՎԱՃԱՌՈՂ

«Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ  
Իրավ. հասցե՝ ք. Երևան, Զաքյան փ. 8  
Գործ. հասցե՝ ք. Երևան, Մ. Չերացի 7  
ՀՎՀՀ՝ 02604367  
Բանկ՝ Կոնվերսբանկ ՓԲԸ  
Հ/Հ 1930041595160100  
Տնօրեն՝ Ն.Անդրեասյան

(ստորագրողի ու նշը)

Կ.Տ

(ստորագրողի ու նշը)

Կ.Տ

